




ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋԻՆՅԱՆ

Բանասիրական գիտ. թեկնածու

ՔՐԻՍՏՈՍ ԱՆՎԱՆ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Հայտնի իրողությունն է, որ հայերենը հատկանշվում է բառակազմության լայն հնարավորություններով և ճկունությամբ: Որպես օրինակ նշենք, որ միայն **-տուն** վերջնաբաղադրիչով հայերենի տարբեր գոյավիճակներում կազմվել են 350-ից ավելի բառեր¹: Արգասավոր բազմաթիվ այլ արմատներ ևս կան, ինչպես՝ **հայ, հող, ջուր, սիրտ, ակն, ծաղիկ, գիր** և այլն, որոնց այդ տեսանկյունից զիջում են հատուկ անունները և հատկապես անձնանունները: Առանձնանում են հատուկեմտ այնպիսի անուններ, որոնցից բազմաթիվ նոր բառեր են բաղադրվել: Օրինակ՝ մեր ժողովրդի Նախահոր անունից ունենք՝ **հայկաբան, հայկազ(ու)ն, հայկազեան, հայկական, հայկյան, հայկաշեն, Հայկունի** և այլն:

Այս իմաստով եզակի է **Քրիստոս** անունը: Հազար յոթ հարյուր տարի առաջ Քրիստոսի հավատն ընդունած մեր ժողովուրդն Աստվածորդու անունով կերտել է ութ տասնյակից ավելի բառեր² (նկատի ունենք նախատիպ ձևերը), որոնց քննությանն է նվիրված սույն աշխատանքը:

Հունարեն այս անվան (**Խրիստոս** «օծյալ») հայցականի **Խրիստոն** ձևից հայերենի **-եայ** մասնիկով կազմվել է **քրիստոնեայ** «Քրիստոսին հե-

¹ Տե՛ս **Դ. Ս. Գյուրջինյան**, «Տուն» վերջնաբաղադրիչով բարդությունները (Պատմա-բանասիրական հանդես, 1991, հ. 2, էջ 153—162):

² Բոլոր այդ բառերը, որոնք հավաքել ենք հայերենի տարբեր բառարաններից, այս կամ այն առիթով հիշատակվում են սույն աշխատանքում: Նոր հայկազեան բառարանում (ՆՀԲ) չվկայվածները տրվում են նոր ուղղագրությամբ:

տևող» բառը, որն էլ իր հերթին բազմաթիվ այլ բառերի հիմք է դարձել: Ամենայն հավանականությամբ **քրիստոնեայ** և **քրիստոնեություն** բառերը կազմվել են գրերի գյուտին նախորդած հայերենի ժամանակաշրջանում³:

Քրիստոս արմատով մյուս բոլոր բառերում ձևային (հիմքային) նման յուրահատկություն չկա, իսկ ժամանակագրական առումով նրանք վերաբերում են գրերի գյուտին հաջորդած ժամանակներին:

Անցնենք մեզ հետաքրքրող բառախմբի լեզվաբանական քննությանը:

Բառերը կերտվել են հայերենի բառակազմական միջոցներով և օրինաչափություններով՝ ածանցման և բառաբարդման ճանապարհով:

ա) Ածանցավոր բառերն իրենց հերթին երկու տեսակի են՝ նախածանցավոր՝ **հակաքրիստոս**, **դերաքրիստոս** «հակառակ Քրիստոսի, սուտ Քրիստոս. նեո», **անքրիստոս** «անհավատ» և վերջածանցավոր՝ **քրիստոսօրեն**, **քրիստոսերեն**, **քրիստոսեան**, **քրիստոսաբար**, **քրիստոսական**, **քրիստոսաբանություն** «Քրիստոսի կյանքի և գործունեության դավանաբանական ուսմունքների ընդհանուր անվանումը»⁴:

բ) Բարդ բառերն այս բառախմբի հիմնական մասն են կազմում: Բարդության կազմիչ մասերը միանում են հոդակապով (**քրիստոսափառ**, **քրիստոսասէր**, **քրիստոսատուր**⁵, **քրիստոսագօր**, **քրիստոսադաւան**, **քրիստոսագունդ**, **քրիստոսադիր**, **քրիստոսագործ** և այլն) և անհոդակապ. ըստ օրենքի ձայնավորից առաջ **ա-**ն չի դրվում (**քրիստոսաւանդ**, **քրիստոսիմաստ**, **քրիստոսութաց** և այլն):

Երկրորդ բաղադրիչն իր հերթին լինում է պարզ (**-գեղ**, **-շահ**, **-մուտ** և այլն) և բաղադրյալ (**-ընդդէմ**, **-ընկալ**): Մի շարք բառերում երկրորդ բաղադրիչի կազմում կարող ենք նշել բառակազմական որևէ մասնիկ, ինչպես՝ **քրիստոսափոխան**, **քրիստոսակրօն**, **քրիստոսածանօթ** և այլն, սակայն դրանք չեն գիտակցվում իբրև այդպիսիք, ուստի այդ բառերը ևս հարկ է ընդունել որպես կազմությամբ բարդ:

գ) Բարդ ածանցավոր բառերը բաղադրված են լինում նախատիպ ձևերից՝ հատկապես **-ություն** վերջածանցի օգնությամբ, ինչպես՝ **քրիստոսասիրություն**, **քրիստոսամարտություն**, **քրիստոսասպանություն**, **քրիստոսանմանություն**, **քրիստոսասիրապես** և այլն: Այդպիսիք այնքան էլ շատ չեն:

Իբրև բառակազմական հիմք, սրանցից զգալապես տարբերվում է **քրիստոնեայ** բառը:

Հետազոտվող բառախմբում նկատում ենք հետաքրքրական մի իրողություն. **Քրիստոս** և **Աստված** բառերի հոմանշությունը հիմք է դարձել նմանակությամբ բառեր ստեղծելու:

Համեմատենք, օրինակ, Ս. Գրքում վկայված **Աստուած** բաղադրիչով բառերը **Քրիստոս** բաղադրիչով ավելի ուշ կազմված հոմանիշների հետ.

³ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 627, 385:

⁴ **Քրիստոսաբան** «քրիստոսաբանությամբ զբաղվող. դրա մասնագետ, գիտակ» ձևը չենք գտել բառարաններում: **-Բան** բաղադրիչն այստեղ, այնպես էլ համանման կազմություններում (**աստվածաբան**, **լեզվաբան**, **արվեստաբան** և այլն) զրկվել է նյութական նշանակությունից և դիտվում է որպես ածանց, ինչպես **գործ-ը**, **գետ-ը**՝ **լեռնագործ**, **արվեստագետ**, **կրոնագետ** և այլ բառերում:

⁵ **Քրիստոս(ա)տուր** և **Քրիստոսասէր** բառերը ձեռք են բերել հատուկ անվան արժեք և հայոց մեջ գործածվել իբրև արական անձնանուններ (**Հր. Աճառյան**, Հայոց անձնանունների բառարան, հ. Ե, Երևան, 1962, էջ 230—231): Առաջինի անհոդակապ տարբերակը դարձել է ազգանվան հիմք՝ **Քրիստոսատուրյան** (հմմտ. **Աստվածատուրյան**):

աստուածապաշտ—քրիստոսապաշտ, Աստուածածին—Քրիստոսածին, աստուածամարտ—քրիստոսամարտ «Քրիստոսի դեմ մարտնչող», աստուածագործ—քրիստոսագործ «Քրիստոսի կողմից արարված», աստուածսէր—քրիստոսասէր⁶: Անշուշտ, հակված չենք այստեղ համաբանության օրենքը միայն տեսնելու. աստուածասէր և քրիստոսասէր բառերը կարող էին անկախաբար կազմվել, քանզի «գոյական+սէր» կաղապարը, օրինակ, հայերենի համար միանգամայն բնական և օրինաչափ իրացումներ կարող էր ունենալ: Նշենք նման կազմություններ՝ վկայված Աստվածաշնչում. այրասէր, անձնասէր, եղբայրասէր, իգասէր, հիւրասէր, մարդասէր, ընկերասէր, որդեսէր, օտարասէր և այլն: Այսպես են թերևս կազմվել քրիստոսավաճառ (հմմտ. մարդավաճառ⁷), քրիստոսապան (հմմտ. մարդապան, տիրապան), քրիստոսատուր (հմմտ. անձնատուր, հայրենատուր), քրիստոսաբեր (հմմտ. մահաբեր, ջրաբեր) և այլն:

Ուշագրավ է այն փաստը, որ քննվող բառերից մի քանիսն ունեն նաև Հիսուս (եբր. «Փրկիչ») բաղադրիչով իրենց հոմանիշները: Հիսուս-ը և Քրիստոս-ը թեև ծագել են տարբեր լեզուներից և տարբեր ստուգաբանական իմաստներ են արտահայտում, հանդես են գալիս իբրև հոմանիշներ: ՆՀԲ-ում արձանագրված են քրիստոսածին և յիսուսածին, քրիստոսաւանդ և յիսուսաւանդ գոյգերը: Քրիստոսադաւան, քրիստոսաձիր բառերի դիմաց նոր ժամանակներում կազմված ունենք հիսուսադավան, հիսուսաձիր բառերը⁸: Որոշ դեպքերում, այնուամենայնիվ, նկատում ենք իմաստային հստակ տարբերակում: Այսպես օրինակ, եթե քրիստոսական և քրիստոսեան բառերը նշանակում են «քրիստոնեական. քրիստոնյա», ապա հիսուսական և հիսուսյան բառերը՝ համապատասխանաբար «ճիզվիտական» և «ճիզվիտ»:

Նույն ձևով հոմանիշներ են կազմվում Տէր/տեառն բաղադրիչով («աստված» նշանակությամբ) բառերի հետ, և փաստորեն գոյանում են քառանդամ հոմանշային շարքեր՝ աստուածածին-քրիստոսածին-յիսուսածին-տիրածին, աստուածաւանդ-քրիստոսաւանդ-յիսուսաւանդ-տիրաւանդ և այլն:

Հոմանիշներ կան հենց հետազոտվող բառահամբի ներսում: Այս անգամ արդեն հոմանշության հիմք է ծառայում երկրորդ բաղադրիչի մերձիմաստ, նույնիմաստ կամ առնչակից իմաստով լինելը: Հմմտ. քրիստոսատեսակ-քրիստոսանման «Քրիստոսի նման, Քրիստոսին նմանվող», քրիստոսասէր-քրիստոսապաշտ, քրիստոսակիր «Քրիստոսին իր մեջ կրող»-քրիստոսունակ «Քրիստոսին իր մեջ ունեցող», քրիստոսատունկ «Քրիստոսի կողմից տնկված»-քրիստոսարկու «Քրիստոսի ձգած՝ տնկված», քրիստոսագունդ-քրիստոսախումբ (նաև՝ քրիստոսածողով) «Քրիստոսի կողմից գնդյալ՝ խմբված՝ հավաքված», քրիստոսագործ-քրիստոսադիր-քրիստոսակարգ «Քրիստոսի կողմից արարված՝ դրված՝ կարգված՝ սահմանված», քրիստոսավաճառ-քրիստոսամատն (իբր «Քրիստոսին մատնող») և այլն:

⁶ Այս գոյգերը կարելի է համեմատել հետևյալ դարձվածային տարբերակների հետ՝ Աստված վկա և Քրիստոսը վկա, Աստծո սիրուն և Քրիստոսի սիրուն // ի սեր Աստծո և ի սեր Քրիստոսի:

⁷ Համեմատվող բոլոր բառերը նույնպես Աստվածաշնչից են:

⁸ Հովհ. Ծիրագի հիսուսվել նորակազմությունը (Ո՛վ հիսուսված խաղաղություն, իջի՛ր խաչից հիսուսված.— Երկեր, հ. 2, Երևան, 1982, էջ 285) հուշում է քրիստոսվել բառի միանգամայն տրամաբանական լինելը (որին չենք հանդիպել որևէ տեղ). հմմտ., «հատուկ անույ՜վ+ե՛ր» կաղապարով շիրագյան մյուս կազմությունների հետ՝ սաշտոցվել, անդրա-նկրվել և այլն:

Կան նաև տարբերակներ, ինչպես՝ **քրիստոսագգաց-քրիստոսագգած**:

Քրիստոս անունը պարունակող որոշ բառերում երկրորդ բաղադրիչները կազմում են հականիշ (կամ հակադրական) զույգեր, որի հետևանքով այդպիսիք են դառնում բարդությունները, ինչպես՝ **քրիստոսաաւեր-քրիստոսատեաց, քրիստոսունակ-քրիստոսամերժ**:

Բնագրային մի շարք նմուշներ պարզորոշ ցույց են տալիս, որ հաճախ բառեր կազմվել են համապատասխան շարահյուսական կառույցներից՝ բաղադրիչների բնական շրջման միջոցով: Օրինակներ՝ **Կոչեցեալք դուք ի Քրիստոսէ**⁹→**քրիստոսակոչ**: Եւ լինէր օր ամօթոյ և կորանաց ամենայն ուրացելոցն ի Քրիստոսէ (անդ, էջ 125)→**քրիստոսուրաց**: Խառնեալք ի գունդն Քրիստոսի¹⁰→**քրիստոսագունդ**: Ընդդիմանան կամաց թագաւորին յաղագս կրօնից քրիստոսականաց¹¹→**քրիստոսակրօն**:

Բառակազմության մյուս ուղին հին հունարեն համապատասխան բառերի պատճենումն է, որը հատկապես հունարեն դպրոցի գործունեության շրջանում մեծ դեր է խաղացել հայերենի բառապաշարի հարստացման գործում: Համեմատենք, օրինակ, հուն. **խրիստոֆորոս**¹²-քրիստոսագգեաց¹³, **խրիստոմախոս**-քրիստոսամարտ, **անտիխրիստոս**-հակաքրիստոս (գործածվում է նաև փոխառյալ ձևը՝ **անտիքրիստոս**):

Հայերենի և հին հունարենի բառակազմությունն ունի ընդհանուր շատ կողմեր, ուստի իրար նման կազմությունների առկայությունը դեռևս հիմք չի տալիս խոսելու պատճենման մասին: Օրինակ՝ **խրիստոտոխոս**-քրիստոսածին, **ֆիլոխրիստոս**-քրիստոսաաւեր. հայերեն բառերը, մեր համոզմամբ, կարող էին կազմվել անկախաբար, հայերենի բառակազմական օրինաչափությունների համաձայն:

Ըստ այդ օրինաչափությունների՝ **Քրիստոս** անունը պարունակող բարդության երկրորդ բաղադրիչը լինում է՝

ա) Գոյական՝ **քրիստոսիմաստ**, **քրիստոսափայլ**, **քրիստոսատեսակ**, **քրիստոսանշան**, **քրիստոսահայր**, **քրիստոսակրօն** և այլն:

բ) Բայարմատ (որ ավելի հաճախ է պատահում). **քրիստոսատուր**, **քրիստոսապատում**, **քրիստոսադէտ**, **քրիստոսասպան**, **քրիստոսավանառ**, **քրիստոսաշարժ**, **քրիստոսառաք**, **քրիստոսամեծար** և այլն:

Մի քանի բառերում երկրորդ բաղադրիչ է դառնում անցյալ կատարյա-

⁹ Ղազարայ Ճարպեցոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1904, էջ 180:

¹⁰ Ագաթանգեղոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1909, էջ 309:

¹¹ Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 246:

¹² Այս բառից է ծագել եվրոպական ժողովուրդների, նաև հայերի մեջ գործածվող **Քրիստափոր** (Քրիստոֆեր) անձնանունը (կրճատ՝ **Քրիստ**): Կա նաև նույնարմատ իգական **Քրիստինե** անձնանունը՝ դարձյալ հունարենից, որ ձևային տեսակետից համահունչ է հայկական **Կարինե**, **Նարինե**, **Զարինե** անուններին (**Մարինե**-ն ևս հունական ծագում ունի):

Հայերենի բառակազմությանը չի առնչվում, սակայն հետաքրքրական է, որ **Քրիստոս** բաղադրիչը կա նաև աշխարհագրական անուններում, ինչպես: **Քրայսթերշ** (անգլ. «Քրիստոսի եկեղեցի») — բաղաբ Նոր Զելանդիայում, **Քրիսթմաս** (անգլ. «Քրիստոսի Ծննդյան տոներ») // Ծննդյան կղզի (տե՛ս **Հ. Ղ. Գրգեարյան, Ն. Մ. Հարությունյան**, Աշխարհագրական անունների բառարան, Երևան, 1989):

¹³ «Քրիստոսին իր մեջ կրող» իմաստից բացի՝ հին հունարեն համարժեքն ունի նաև «քրիստոսաբեր» իմաստը (տե՛ս **И. Х. Дворецкий**, Древнегреческо-русский словарь, Мոսկվա, 1958, էջ 1786:

լի հիմքը, ինչպես՝ քրիստոսաւեաց, քրիստոսակեցոյց, քրիստոսազգեաց¹⁴, քրիստոսութեաց:

Վերոհիշյալ դեպքերում այդ բաղադրիչը հանդես է գալիս ենթակայական և հարակատար դերբայների նշանակությամբ: Օրինակ՝ քրիստոսատուր «Քրիստոսի կողմից տրված», քրիստոսազարդ «Քրիստոսի կողմից կամ Քրիստոսով զարդարված», քրիստոսակոչ «Քրիստոսի կողմից կոչված՝ հրավիրված», քրիստոսադավ «Քրիստոսին դավող», քրիստոսաւեաց «Քրիստոսին ատող» և այլն: Որոշ դեպքերում մեկնաբանվում է երկու ձևով, ինչպես՝ քրիստոսամեծար «Քրիստոսին մեծարող» և «Քրիստոսի կողմից մեծարված» և այլն:

գ) Ածական՝ քրիստոսահանոչ, քրիստոսամերձ, քրիստոսանման, ինչպես նաև ձևաբանորեն տարաբժեք բառ՝ քրիստոսափոխան (ած.-գոյ.):

Բարդության առաջին բաղադրիչը լրացական հարաբերության մեջ է լինում երկրորդի հետ, որը բարդության հիմնական իմաստակիր միավորն է: Բաղադրիչների միջև նկատվում են հետևյալ շարահյուսական հարաբերությունները:

ա) Հատկացուցիչ-հատկացյալի՝ քրիստոսաժաղիկ (հմմտ. վերլուծական ձևի հետ՝ Քրիստոսի ծաղիկ, նաև՝ Քրիստոսի վարդ)¹⁵, քրիստոսահայր «Հիսուսի նախահայրը՝ Աբրահամ, Դավիթ...», քրիստոսանշան, քրիստոսակրօն և այլն:

բ) Ավելի շատ են այն բառերը, որոնցում առաջին բաղադրիչն ուղիղ խնդրի իմաստով է հանդես գալիս՝ քրիստոսաւեաց, քրիստոսասէր, քրիստոսավաճառ, քրիստոսադաւան, քրիստոսածին, քրիստոսապան և այլն: Նկատելի է, որ երկրորդ բաղադրիչը բայարմատ է:

գ) Բարդության բաղադրիչների միջև հնարավոր է նշել խնդրային այլ հարաբերություններ՝ քրիստոսազարդ, քրիստոսաւանդ «Քրիստոսի կողմից ավանդված», քրիստոսակարգ, քրիստոսադրոշմ «Քրիստոսի կողմից դրոշմված», քրիստոսանուէր «Քրիստոսին նվիրված», քրիստոսախառն «հոգեպես խառնված կամ միացած Քրիստոսին», քրիստոսատունկ և այլն: Այստեղ, սակայն, մեկնաբանությունները միանշանակ չեն կարող լինել, և հընարավոր են երկիմաստություններ: Օրինակ՝ քրիստոսապատում «Քրիստոսի կողմից պատմված» և «Քրիստոսի մասին պատմող», քրիստոսախօս «որ Քրիստոսով է խոսում» և «որով Քրիստոսն է խոսում», քրիստոսապսակ «Քրիստոսից կամ Քրիստոսով պսակված» և այլն:

Քրիստոս անունը պարունակող բառերն ըստ ձևաբանական նշանակության լինում են՝

¹⁴ «Քրիստոսազգեացք էիք ի մանկութենէ, արդ մերկացեալք ի փառացն՝ դիաբար արեգակա՞ն կաքաւիցէք» նախադասության դիմաց Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին» երկի համաբարբառում իբրև գլխաբառ նշված է քրիստոսազգի բառը (տե՛ս «Հայկական համաբարբառ», 5—Բ, Երևան, 1975, էջ 615, կազմեց Լ. Ա. Գուլգազարյան), որ ճիշտ չէ: Այդպիսի ձև չենք գտել հայերեն որևէ բառարանում, չնայած որ հնարավոր է կազմել:

¹⁵ Սրանք եղեբորոս բույսի նույնանիշ ժողովրդական անվանումներն են: Քրիստոսաժաղիկ են կոչել հավանաբար արտակարգ բուծիչ հատկություններ ունենալու համար: Նույն ձևով ունենք մարեմխոտ, մարեմծաղիկ:

Քրիստոս անունը վերոհիշյալ վերլուծական կազմություններում վկայվում է փոքրատառով, իբրև հասարակ անվան կազմիչ մաս (տե՛ս Ա. Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, 1967, էջ 179):

ա) Գոյական՝ **դերաքրիստոս, հակաքրիստոս, քրիստոսին** «քրիստոնյա» (ի դեպ, -ին մասնիկի նման կիրառությունը սովորական չէ հայերենի համար), **քրիստոսաբանություն** և այլն:

բ) Ածական, որ բառերի գերակշիռ մասն է կազմում՝ **քրիստոսակիր, քրիստոսաբեր, քրիստոսակարգ, քրիստոսախօս, քրիստոսընկալ, քրիստոսադրոշմ, քրիստոսազարդ, քրիստոսաթև, քրիստոսաձիր** և այլն: Հատկանիշ ցույց տվող այս և ուրիշ բառեր գործածված ենք տեսնում **քրիստոսաբեր փրկութիւն, քրիստոսադիր աւանդ, քրիստոսամերձ արքայ, քրիստոսունակ կուսանք, քրիստոսագեղ հոգի, քրիստոսազարդ սուրբ նշան քրիստոսագունդ առաքեալք, քրիստոսածողով բանակ, քրիստոսատունկ որթ** և այլ կապակցություններում, որոնք առանձնակի գրավչություն և հմայք են հաղորդում խոսքին:

գ) Մակբայ՝ **քրիստոսօրէն, քրիստոսերէն, քրիստոսաբար:**

դ) Բայ՝ **քրիստոսագգեստեմ** (քրիստոսագգեսաց առնեմ): Կան և անցյալ դերբայի որոշ ձևեր՝ **քրիստոսազարդեալ//քրիստոսազարդ, քրիստոսապսակեալ//քրիստոսապսակ**, որոնք ընկալվում են որպես ածականներ (հմտտ. **հանդերձեալ, կորուսեալ** և այլն):

Բնական է, որ լեզվի զարգացման ընթացքում բառերի ձևաբանական իմաստներում լինում են տեղաշարժեր: Այդ երևույթը նկատելի է նաև այստեղ: Այսպես, օրինակ, **քրիստոսեան**-ը «քրիստոսական» նշանակությամբ ածական է, իսկ «քրիստոնյա» իմաստով՝ գոյական:

Իմաստային ոշագրավ մի իրողության մասին: **Քրիստոս** անունով կազմված որոշ բառերում առաջին բաղադրիչը նշում է ոչ միայն Քրիստոսին (անձը, պաշտամունքի առարկան), այլև Քրիստոսի ուսմունքը, դավանանքը՝ քրիստոնեությունը, նաև Քրիստոսի հավատացյալներին: Այսպես՝ **քրիստոսասէր** բառը կարող է մեկնաբանվել ինչպես «Քրիստոսին սիրող», այնպես էլ «քրիստոնյաներին սիրող», **քրիստոսութաց՝** «Քրիստոսին կամ քրիստոնեությունը ուրացող, նրան դավանանող», **քրիստոսանենգ** «Քրիստոսին և քրիստոնեությունը նենգող՝ նրանց դեմ չար դիտավորություն նյութող», **քրիստոսապաշտ** «Քրիստոսին և քրիստոնեությունը պաշտող»: Իսկ **քրիստոսապսակ** բառում, թվում է, գերակշռողը «քրիստոնեություն») «քրիստոնեական» իմաստն է՝ «քրիստոնեական ծեսով թագադրված՝ պսակված»:

Այժմ տեսնենք, թե հետազոտվող բառերը ժամանակագրական ինչպիսի շերտեր են ներկայացնում: Ի տարբերություն **քրիստոնեայ** բառի, **Քրիստոս** անունն անխաթար ներկայացնող մյուս բոլոր բառերը, թվում է, կազմվել են Ե դարում և դրանից հետո:

Հայերեն առաջին իսկ ինքնուրույն երկերում տեսնում ենք մեզ հետաքրքրող բառերից. Կորյունի «Վարք Մաշտոցի» երկում՝ **քրիստոսական, քրիստոսաբեր, քրիստոսադիր, քրիստոսագգեստ, քրիստոսակոշ, քրիստոսամեծար, քրիստոսասէր**, Ագաթանգեղոսի «Պատմութիւն Հայոց»-ում՝ **քրիստոսագործ, քրիստոսագունդ, քրիստոսածանօթ, քրիստոսակեցոյց, քրիստոսամուտ, քրիստոսանշան, քրիստոսապատում, քրիստոսատուր, քրիստոսեան** (կա նաև Աստվածաշնչում), **քրիստոսաւանդ** (ներառյալ ևս չորսն այն բառերից, որ նշել ենք նախորդ հեղինակի առիթով):

Վերոհիշյալ կազմությունները մեզ հեղինակային նորաբանություններ են թվում: Դրանք գրքային են, ինչպես հետազոտվող մյուս բոլոր բառերը:

Գրաբարի հետագա շրջաններում ևս կազմվել են նմանօրինակ բառեր,

ինչեպս՝ **քրիստոսառաք**, **քրիստոսապահեստ**, **քրիստոսանկար**, **քրիստոսակարգ**, **քրիստոսահանոյ**, **քրիստոսապաշտ**, **քրիստոսածին** և այլն:

Բազմաթիվ բառեր էլ տրված են արդի հայերենի տարբեր բառարաններում՝ **քրիստոսընդդեմ**, **քրիստոսափառ**, **քրիստոսանորոգ**, **քրիստոսանենգ**, **քրիստոսախումբ**, **քրիստոսադավ**, **քրիստոսախրատ** և այլն, սակայն դրանց կազմության ժամանակի և ստեղծողի մասին դժվար է վերջնական դատողություններ անել: Այդ բանը հնարավոր կլինի համաբարբառների, հեղինակային բառարանների ստեղծումից հետո միայն:

Այնուամենայնիվ, հատուկեմտ բառերի հեղինակին հնարավոր է նշել: Ամենայն հավանականությամբ Ստ. Զորյանն է ստեղծել **քրիստոսանենգ** և **քրիստոսադավ** բառերը՝ **քրիստոսադավ թագավոր** (խոսքը Պապ թագավորի մասին է), **քրիստոսանենգ** հրաման կապակցությունների մեջ (Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1962, էջ 646, 647). հմմտ. **աստուածանենգ**, **տիրանենգ**, **տիրադաւ**, Պ. Սևակը՝ **քրիստոսատիպ** բառը՝ **խորհուրդ քրիստոսատիպ** կապակցության մեջ (Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1976, էջ 114), որը կարելի է համեմատել մի կողմից **քրիստոսատեսակ** և **քրիստոսանման**, մյուս կողմից՝ **աստուածատիպ** բառի հետ:

Ֆ. Վերֆելի Christusgeschrei բառի նմանակությամբ է կազմվել. **քրիստոսագոչ** բառը՝ **քրիստոսագոչ աղաղակներ** կապակցության մեջ (Geschrei գերմաներեն նշանակում է «ճիչ, աղաղակ») ¹⁶:

Հայոց Վազգեն Ա և Գարեգին Բ Հայրապետների՝ հայ ժողովրդին ուղղված «Հայրական խոսք»-ում գտնում ենք **քրիստոսաշավիղ** բառը, **քրիստոսաշավիղ Առաքյալներ** կապակցության մեջ («Էջմիածին», 1992, Ը, էջ 16), որը վկայված չէ բառարաններում և կարծես թե նորակազմություն է:

Ասվածը հուշում է, որ կլինեն ուրիշ բառեր ևս, որոնք սփռված են հայ մատենագրության, մամուլի էջերում և տեսադաշտից դուրս են մնացել: Օրինակ՝ ԺԷ դարի բանաստեղծ Արիստակես Խարբերդցու ոտանավորներից մեկում կարդում ենք «**Քրիստոսավանքն** սուրբ Փրկչին» տողը (տե՛ս «Ուշ միջնադարի հայ բանաստեղծությունը (XVI—XVII դդ.)», հ. Բ, աշխատասիրությամբ Հ. Սահակյանի, Երևան, 1987, էջ 236): Բառս այլուր վկայված չէ: Բառակազմության տեսանկյունից այն կարելի է համեմատել **Հովհաննավանք**, **Երիցավանք**, **Հայրավանք**, **Վահանավանք** և այլ վանքաանունների հետ:

Հայերենի բառակազմական կաղապարների հիման վրա **Քրիստոս** անունով հնարավոր է կերտել ուրիշ բառեր ևս՝ **քրիստոսաշնորհ**, **քրիստոսապարզ** և այլն:

¹⁶ Հմմտ. F. Werfel, Die vierzige Tage des Musa Dagh, Բեռլին, 1955, էջ 307 և Ֆ. Վերֆել, Մուսա լեռան բառասուն օրը (թարգմ.՝ Պարույր Միքայելյան), Երևան, 1964, էջ 349: